# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի N 1920-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**<<______>> ________________ 2019թ. N_______ -Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի N 1920-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 7-ի «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 1920-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 5-րդ կետում՝

ա. «ա» ենթակետը «ինչպես նաև» բառից հետո լրացնել «նախապատրաստական և» բառերով,

բ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «թ» ենթակետով.

«թ) պրակտիկայի կազմակերպում և անցկացում.».

2) որոշմամբ հաստատված կանոնադրության 10.1-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետում «ինչպես նաև» բառից հետո լրացնել «նախապատրաստական և» բառերով,

բ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9) ենթակետով.

«9) պրակտիկայի կազմակերպում և անցկացում:»:

3) որոշմամբ հաստատված կանոնադրության 72-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«72. Կոնսերվատորիան իրավունք ունի իրեն ամրացված գույքը հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ և ուրիշներից գույք վարձակալել: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի վարձակալության հանձման արդյունքում ստացված եկամուտները կոնսերվատորիայի սեփականությունն են:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: